



# ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆԱ

## ՈւՂԵՑՈՒՅՑ 1

### ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԳԾՈՎ

Ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշման փաթեթն ստանալուց հետո Ապահովադիրը, Ապահովագրված անձը և Տուժողը (այսուհետ՝ Հաճախորդ) արդյունքներին չհամաձայնելու դեպքում իրավունք ունեն պահանջ ներկայացնել ստորև նշված եղանակներից որևէ մեկով.

- ❖ Պահանջ ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին. մանրամասներին ծանոթանալու համար սեղմե՛ք [այստեղ](#) (ծառայությունն անվճար է):
- ❖ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ 5 աշխատանքային օրվա ընթացքում (ցանկալի է հնարավորինս շուտ / ամենաուշը 4 աշխատանքային օրվա ընթացքում) ծանուցումը ստանալուց հետո ապահովագրական ընկերությանը դիմում ներկայացնել կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ, որից ստացել են ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումը և որի շրջանակներում ենթակա է բողոքարկման փորձագիտական եզրակացությունը (վճարովի ծառայություն):

Կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմում ներկայացնելու համար պահպանել ստորև նշված քայլերի հաջորդականությունը՝

1. Ընտրել փորձաքննության տեսակը.

Կրկնակի փորձաքննությունների կազմակերպման կարգը և ժամկետները			
Կրկնակի փորձաքննության տեսակը		Փորձաքննության իրականացման առավելագույն ժամկետը	ՀՀ և ԱՀ տարածքում փորձաքննության իրականացման գինը(ՀՀ դրամ)
<b>ՎՆԱՍԻ ՉԱՓ.</b> Գույքին պատճառված վնասի մասով կրկնակի փորձաքննություն	Պատահարների ինքնուրույն գրանցմամբ վնասի հատուցման գործընթացում	3 աշխատանքային օր	5,000
	Այլ հատուցման գործընթացներում	5 աշխատանքային օր	15,000
<b>ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.</b> Պատահարի առաջացման պատճառների մասով կրկնակի փորձաքննություն	Մեղավորության և վթարի մեխանիզմի համապատասխանության որոշում	5 աշխատանքային օր	20,000
	Ներկայացված վթարի հետ ՏՄ-ների վրա առկա հետքերի համատեղելիության որոշում*	5 աշխատանքային օր (ի լրումն մեղավորության և վթարի մեխանիզմի համապատասխանության որոշման համար սահմանված ժամկետի)	45,000

\* Ներկայացված վթարի հետ ՏՄ-ների վրա առկա հետքերի համապատասխանության որոշումն անհնար է առանց մեղավորության և վթարի մեխանիզմի համապատասխանության որոշման: Գործընթացի ընդհանուր տևողությունը 10 աշխատանքային օր է (5 + 5 աշխատանքային օր), վճարման ենթակա ընդհանուր գումարը՝ 65,000 ՀՀ դրամ (20,000 ՀՀ դրամ + 45,000 ՀՀ դրամ):

2. Ընտրված փորձաքննության համար կատարել վճարում 1-ին կետի աղյուսակում սահմանված չափով ստորև նշված բանկի հաշվեհամարին՝ վճարման ժամանակ նշելով ստորև սահմանված տեղեկատվությունը  
 («ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին Կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմում ներկայացնելու դեպքում)։

Բանկի անվանում	Հաշվեհամար	Հաշվետեր	Նպատակ դաշտում նշման ենթակա տեղեկատվություն (Դիմումատուի անուն, ազգանուն, ԱՄ դեպքում՝ հաշվառման համարանիշ/Այլ գույքի դեպքում՝ անվանում, Որոշում-ծանուցման համար)
«Արարատ Բանկ» ԲԲԸ	1510035133640200	«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	Օրինակ՝ Պողոս Պողոսյան, ՕՕՍՍՕՕՕ կամ ավտոտրանսպորտային մեքենա, CT00000001

3. 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերություն ներկայացնել (նշված ժամկետները չպահպանելու դեպքում դիմումը կարող է մերժվել)՝ կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ պահանջի վերաբերյալ դիմումը և կից փաստաթղթերը ստորև նշված տարբերակներից որևէ մեկով։

**Տարբերակ 1 (Կայքի միջոցով)**

Սեղմելով այստեղ՝

- Կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ պահանջի վերաբերյալ դիմումը լրացնել։
- Փորձաքննության համար կատարված վճարման անդորրագրի լուսապատճենը կցել։
- Անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը կցել։
- Ավտոտրանսպորտային միջոցին կամ այլ գույքին, որի գծով ներկայացվում է դիմումը, վերաբերող փաստաթղթերը կցել.
  - Գույքի նույնականացման տվյալները պարունակող փաստաթղթի լուսապատճենը,
  - Ավտոտրանսպորտային միջոցի (հաշվառման (գրանցման) վկայագրի կամ հայտարարագրի կամ նմանատիպ փաստաթղթի լուսապատճենը։
- Լուսանկար/ները (առկայության դեպքում) կցել։
- Տեսագրություն/ները (առկայության դեպքում) կցել։
- Լիազորագրի լուսապատճենը կցել, եթե դիմում ներկայացնող անձը տարբերվում է Ապահովագրված անձից, Ապահովադրից և/կամ Տուժողից։

**Տարբերակ 2 («LIGA MOBILE» բջջային հավելվածի միջոցով)**

Ներբեռնելով Բջջային հավելվածը այս հղումով՝

- Մուտք գործել «Դիմում» բաժին և սեղմել «Ավելացնել դիմում» կոճակը, ընտրել «ԱՊՊԱ կրկնակի փորձաքննության դիմում» տարբերակը և լրացնել անհրաժեշտ տվյալները։
- Դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի և լիազորագրի լուսապատճենը կցել, եթե դիմում ներկայացնող անձը տարբերվում է Ապահովագրվածանձից, Ապահովադրից և/կամ Տուժողից։

- Ապահովադրի անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը կցել:
- Վնասված գույքի լուսանկար/ները (առկայության դեպքում) կցել:
- Վնասված գույքի տեսագրություն/ները (առկայության դեպքում) կցել:
- Փորձաքննության համար կատարված վճարման անդորրագրի լուսապատճենը կցել:
- Ավտոտրանսպորտային միջոցին կամ այլ գույքին, որի գծով ներկայացվում է դիմումը, վերաբերող փաստաթղթերը կցել.
  - Գույքի նույնականացման տվյալները պարունակող փաստաթղթի լուսապատճենը,
  - Ավտոտրանսպորտային միջոցի (հաշվառման (գրանցման) վկայագրի կամ հայտարարագրի կամ նմանատիպ փաստաթղթի լուսապատճենը:

### Տարբերակ 3 (Էլ. փոստի միջոցով)

[dimum@ligainsurance.am](mailto:dimum@ligainsurance.am) էլ. հասցեին ուղարկելով.

- Կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ պահանջի վերաբերյալ լրացված/ստորագրված դիմումի լուսապատճենը:

### Ուշադրություն !

- «Կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմում» անվանմամբ ձևաթուղթն անհրաժեշտ է ներբեռնել «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կայքէջից՝ «ԱՊՊԱ շրջանակներում այլ լրացվող ձևաթղթեր և դիմումներ» բաժնից՝ [սեղմելով այս հղմանը](#) :
  - Փորձաքննության համար կատարված վճարման անդորրագրի լուսապատճենը,
  - Անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը,
  - Ավտոտրանսպորտային միջոցին կամ այլ գույքին, որի գծով ներկայացվում է դիմումը, վերաբերող փաստաթղթերը՝
    - Գույքի նույնականացման տվյալները պարունակող փաստաթղթի լուսապատճենը,
    - Ավտոտրանսպորտային միջոցի (հաշվառման (գրանցման) վկայագրի կամ հայտարարագրի կամ նմանատիպ փաստաթղթի լուսապատճենը:
  - Լուսանկար/ները (առկայության դեպքում):
  - Տեսագրություն/ները (առկայության դեպքում):
  - Լիազորագրի լուսապատճենը, եթե դիմում ներկայացնող անձը տարբերվում է Ապահովագրված անձից, Ապահովադրից և/կամ Տուժողից:
4. Դիմումը հաստատվում է ուղարկման հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունից ստացած ձայնագրվող հեռախոսազանգի միջոցով:

Դիմումին ընթացք է տրվում, եթե այն ներկայացվել է սահմանված կարգով/ձևով և վերջինիս կցված են եղել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ ներառյալ կրկնակի փորձաքննության համար պահանջվող վճարի կատարման փաստը հավաստող փաստաթուղթը:

## Ուշադրություն !

- ✓ Ապահովագրական ընկերությունը վերադարձնում է Հաճախորդի կողմից կատարած վճարումները՝ համաձայն ՀԱԲ ԱՊՊԱ ընդհանուր կանոնների, մասնավորապես՝
  - Եթե կրկնակի փորձաքննության համար նախապես վճարված գումարը գերազանցում է կրկնակի փորձաքննության իրականացման համար կատարված ծախսերը, ապա վերադարձնում է տարբերության չափով:
  - Եթե կրկնակի փորձաքննության անցկացման պահանջը մերժվել է, ապա վերադարձնում է վճարված գումարն ամբողջությամբ:
- ✓ Հաճախորդը ապահովագրական ընկերությանը պարտավոր է փոխհատուցել պակաս վճարված գումարի չափով, եթե Հաճախորդի կողմից վճարված գումարը պակաս է կրկնակի փորձաքննության իրականացման համար փորձագետին վճարված գումարից:

**Ուղեցույց 2**  
**ՈՐՈՇՈՒՄ-ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ**

**Այսպես է նշվում Որոշում-ծանուցման համարը**

Սույն փաստաթուղթը կազմված է փոխանցված (փոխանակված) է ԱՄՄՊ համակարգի միջոցով 08/10/2020 16:56

Ձև 7.3

ՈՐՈՇՈՒՄ-ԾԱՆՈՒՑՈՒՄ  
 ԿԱՐԿՐՈՒՄ

Ամսաթիվը և հերթական համարը	<b>CT00000001</b>	13	11	2020
		օր	ամիս	տարի
Ծանուցում իրականացրողը	(նշվում է ծանուցումն իրականացրողի անվանումը)			

ՈւՂԵՑՈՒՅՑ 3

ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԻ ԼՐԱՑՄԱՆ

Ձև 8.2

ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄ

1. Պահանջ ներկայացնողը				
1.1.	Կրկնակի փորձաքննության պահանջ ներկայացնող	Պողոս Պողոսյան AP1111111		
		(անունը և ազգանունը կամ անվանումը, անձը հաստատող փաստաթուղթ կամ ՀՎՀՀ)		
1.2.	Բողոքարկողի իրավական կարգավիճակը համապատասխան պատահարում	<input type="checkbox"/> տուժող	<input checked="" type="checkbox"/> ապահովագրված անձ	
		<input type="checkbox"/> ապահովագիր	<input type="checkbox"/> ապահովագրող	
2.	Բողոքարկվող փորձագիտական եզրակացության համարը և ամսաթիվը	N 1111111111111	01	01 2023
		Համարը	Օրը	Ամիսը Տարին
3. Կրկնակի փորձաքննության համար փորձագետին ներկայացման ենթակա առաջադրանքներ (նշվում է անհրաժեշտը)				
<input checked="" type="checkbox"/>	3.1	Տալ եզրակացությունն սույն դիմումով ներկայացվող գույքին պատճառված վնասների առաջնային փորձաքննության արդյունքների՝ Բյուրոյի կանոններին համապատասխանության վերաբերյալ		
<input type="checkbox"/>	3.2	Տալ եզրակացությունն սույն դիմումով ներկայացվող պատահարի առաջացման պատճառների առաջնային փորձաքննության արդյունքների՝ Բյուրոյի կանոններին համապատասխանության վերաբերյալ		
<input type="checkbox"/>	3.3	Պարզել սույն դիմումով ներկայացվող պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վրա առկա հետքերի համատեղեցիկությունը ներկայացված վթարի հետ (կատարել հետաքազանական և (կամ) նյութագիտական հետազոտություն)		

Սույն փաստաթուղթը կազմված և փոխանցված (փոխանակված) է ԱԱՄՊ համակարգի միջոցով: 11/11/2020 16:36

ԵԶՐԱԿԱՑՈՒՄ N 027473

ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱԿՍՏԱՆ ԱՌԱՂԱՅԻՆ ՈՒՍՏԱՆԻՉ ԲՈՒՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՐՁԱՑՆԱԿ

Փորձաքննության եզրակացությունը կազմելու ամսաթիվը

11	11	2020
----	----	------

1. ԵՆԴՀԱՆՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐ

1.1	Փորձաքննության պատասխանում	<input checked="" type="checkbox"/>	Մշվում է Ապահովագրական ընկերության անվանումը	<input type="checkbox"/> Բյուրո
1.2	Փորձագրի համարը և ստացման ամսաթիվը	DP 00000001	09	11
1.3	Պատվերի տեսակը	համար	օր	ամիս տարի

առաջնային փորձաքննություն  բացուցիչ փորձաքննություն

Դիմումի 3-րդ կետում ընտրվում է համապատասխան պահանջը: Ընտրված պահանջի դիմաց պետք է նախապես կատարվի վճարում՝ համաձայն ստորևադրուսակում նշված գումարի չափի:

Կրկնակի փորձաքննությունների կազմակերպման կարգը և ժամկետները				
Կրկնակի փորձաքննության տեսակը	Փորձաքննության իրականացման առավելագույն ժամկետը	<< և ԱՀ տարածքում փորձաքննության իրականացման գինը(<< դրամ)		
ՎՆԱՍԻ ԶԱՓ. Գույքին պատճառված վնասի մասով կրկնակի փորձաքննություն	Պատահարների ինքնուրույն գրանցմամբ վնասի հատուցման գործընթացում	3 աշխատանքային օր	5,000	Կետ 3.1
	Այլ հատուցման գործընթացներում	5 աշխատանքային օր	15,000	Կետ 3.1
ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. Պատահարի առաջացման պատճառների մասով կրկնակի փորձաքննություն	Մեղավորության և վթարի մեխանիզմի համապատասխանության որոշում	5 աշխատանքային օր	20,000	Կետ 3.2
	Ներկայացված վթարի հետ ՏՄ-ների վրա առկա հետքերի համատեղեցիկության որոշում	5 աշխատանքային օր (ի լրումն մեղավորության և վթարի մեխանիզմի համապատասխանության որոշման համար սահմանված ժամկետի)	45,000	Կետ 3.3

4. Տեղեկություններ գույքի գտնվելու վայրի մասին (Կիրառելի է 3.1 և 3.3 կետերով նախատեսված առաջադրանքների դեպքում)					
4.1.	Վնասված գույքի փաստացի գտնվելու վայրը, որտեղ հնարավոր է կատարել վնասված գույքի զննություն		Երևան	Հյուսիսային պողոտա 1	
		մարզ	քաղաք/գյուղ	փողոց	այլ կողմնորոշիչ
4.2.	Անձի անունը, ազգանունը և հեռախոսահամարը, ում հետ կարելի է կապ հաստատել վնասված գույքի զննություն իրականացնելու համար		Պողոս Պողոսյան 093000000		
5.	Կրկնակի փորձաքննության արդյունքները խնդրում եմ ծանուցել հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեով՝ (եթե ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով նախատեսված է ծանուցման կոնկրետ հասցե, ապա այդ հասցեից տարբերվող հասցեի նշումն իրավական ուժ չունի)		<a href="mailto:poghos.poghosyan@poghosyan.com">poghos.poghosyan@poghosyan.com</a>		
6.	Բանկային հաշիվ, որին անհրաժեշտ է հետ փոխանցել գումարը՝ կրկնակի փորձաքննության պահանջը մերժվելու դեպքում (կիրառելի է այն դիմումատուների գծով, որոնց համար Բյուրոյի կանոններով նախատեսված է դիմումով գումարի հետ ստացման բանկային հաշվեհամարը փոփոխելու հնարավորություն)		<a href="tel:1111111111111111">1111111111111111</a>		
Անվանումը					
Կրկնակի փորձաքննության համար վճարը վճարված լինելու մասին փոխանցման (մուտքի, վճարման) անդորրագրի լուսապատճենը					
Լուսանկար/ներ (առկայության դեպքում)					
Տեսագրություն/ներ (առկայության դեպքում)					
7. Հաստատումներ					

Լրացվում է վնասված գույքի փաստացի գտնվելու վայրը, որտեղ հնարավոր է կատարել վնասված գույքի զննություն:

Դիմումի 5-րդ կետում նշվող էլ. փոստի հասցեն պետք է համապատասխանի մեքենայի վերաբերյալ պատահարի պահից մինչև ծանուցման պահը գործող ԱՊՊԱ պայմանագրում (առկայության դեպքում) նշված էլ. փոստի հասցեին՝ այլապես ծանուցման պահին հիմք է ընդունվելու գործողությամբ ԱՊՊԱ պայմանագրում նշված էլ. փոստի հասցեն:

Դիմումի 6-րդ կետում նշվող հաշվեհամարը պետք է լինի փորձաքննության անցկացման համար վճարում կատարած անձինը՝ այլապես գումարը փոխանցվելու է կրկնակի փորձաքննության անցկացման համար մնառում նատուած անձին:

7.1.	Կրկնակի փորձաքննություն նշանակելու հիմքերի առկայության դեպքում լիազորում եմ Բյուրոյին համապատասխան փորձագետի հետ Բյուրոյի կնքած պայմանագրի շրջանակներում կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացրած անձի անունից և հաշվին պատվիրել Դիմումով պահանջվող կրկնակի փորձաքննության անցկացումը և ստանալ փորձաքննության արդյունքները:		
7.2.	Խնդրում եմ կրկնակի փորձաքննության արդյունքները սույն դիմումով սահմանված եղանակով ինձ ծանուցելու պահից համապատասխան փորձագետի ծառայությունները համարել կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացրած անձինմատուցված և դրա հետ կապված դուրս գրված հաշիվ ապրանքագիրն նրա կողմից ինքնաշխատ ստորագրված (հաստատված):		
7.3.	Տեղեկացված եմ, որ կրկնակի փորձաքննությունն անց է կացվում պահանջ ներկայացրած անձի միջոցների հաշվին և կրկնակի փորձաքննություն անցկացնելու համար պահանջվող գումարի չվճարումը և (կամ) վճարման հիմք հանդիսացող փաստաթղթի չկցելը սույն դիմումին կհանգեցնի կրկնակի փորձաքննության անցկացման պահանջի՝ Բյուրոյի կողմից մերժմանը (կիրառելի չէ Ապահովագրողի նկատմամբ):		
7.4.	Ծանոթացել եմ Բյուրոյի համապատասխան կանոններին և Բյուրոյի կայքում հրապարակված՝ կրկնակի փորձաքննության անցկացման պայմաններին, ժամկետներին, վճարի չափին և համաձայն եմ դրանց:		
7.5.	Տեղեկացված եմ, որ կրկնակի փորձաքննության պահանջը մերժվելու կամ այլ հիմքով փորձաքննություն չիրականացվելու դեպքում կրկնակի փորձաքննության համար վճարված գումարը փոխանցվելու է սույն դիմումում ներկայացված բանկային հաշվին:		
7.6.	Տեղեկացված եմ, որ եթե հետագայում ցանկանամ ընթացք չտալ սույն դիմումին, և այդ պահի դրությամբ Բյուրոյի կողմից արդեն իսկ նշանակված լինի կրկնակի փորձաքննություն, ապա սույն դիմումի հիման վրա նշանակված կրկնակի փորձաքննությունը ամեն դեպքում չի դադարեցվի և կիրականացվի սահմանված կարգով:		
<b>Դիմողի (դիմողի անունից ներկայացված անձի)անունը ազգանունը</b>		<b>Դիմողի (դիմողի անունից ներկայացված անձի) ստորագրությունը</b>	
<b>Պողոս Պողոսյան</b>			
Դիմումի լրացման ամսաթիվը	01	01	2023
	օր	ամիս	տարի

Լրացվում է դիմողի, իսկ եթե դիմումը ներկայացվել է լիազորված անձի կողմից, ապա՝ վերջինի անունը ազգանունը, ստորագրությունը (կնիքի առկայության դեպքում՝ նաև կնիքը), ինչպես նաև դիմումի ներկայացման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով